

1719. — Կոլոտ եւ Շղթայակիր Զենոբ Գլակը առաջին անգամ տպագրութեամբ ի լոյս կ'ընծայեն:

1720. — Կոլոտ եւ Շղթայակիր Երուսաղէմի շինութեանց ձեռնարկելու հրաման կը դրկեն Հաննէ վարդապետին, երբ «տասը դրուշ իսկ չկար վանքին մէջ»:

1721. — Շղթայակիր ճամբայ կ'ելլէ դէպի Երուսաղէմ՝ ցամաքէն. Բերիա (= Հալէպ) կը հանդիպի. «բաղում միւլքեր» կը գնէ հոն Երուսաղէմի համար, կը նորոգէ «հոգետունը» եւ

1721 փետր. 12. — Երուսաղէմ կը մտնէ:

1722. — Կոլոտ կը նորոգէ Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցին եւ կը շինէ Ս. Երրորդութեան մատուռ՝ մահտեսի Մէլիքի աշխատակցութեամբ:

1722. — Կոլոտ կ'ազատագրէ արքունի հրամանաւ Պարսկաստանէն քշուած գերիները: Ըստ Հաննէի «երկրտառան ամ» տեւեց այս մարդասիրական մեծագործութիւնը, այսինքն՝ մինչեւ Կոլոտին մահը:

1725. — † Աստուածատուր Կաթողիկոս:

1725. — Կոլոտ ժողով կը գումարէ Պոլիս՝ Մայր Եկեղեցւոյ մէջ եւ Կաթողիկոս կ'ընտրուի Զօլէի, Գաղատիոյ Առաջնորդ Կարապետ Եպս:

1726 փետր. 27. — Մեծպահոց Բ. Կիրակին Կաթողիկոս կ'օծուի՝ Կարապետ Եպս, Պոլիս՝ Մայր Եկեղեցւոյ մէջ՝ 12 Եպիսկոպոսներէ:

1726 Մարտ 1. — Կոլոտ, 48 տարեկան, Եպիսկոպոս կը ձեռնադրուի Կարապետ Կաթողիկոսէն՝ Պոլսոյ Մայր Եկեղեցւոյ մէջ:

1726 Մարտ 1. — Կարապետ Կաթողիկոս Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ՝ Եպիսկոպոս կը ձեռնադրէ Շղթայակիրին փո-